ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 891-Ա/Ք 20 հոկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14 կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Մրցույթի շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով՝ ձևավորել մասնագիտական փորձագիտական խորհուրդ՝ համաձայն հավելված N 3-ի:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳ նախարարի
2015թ. «20» հոկտեմբերի
N 891-Ա/Ք հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը և Հայաստանի Հանրապետության Նախագահի հովանու ներքո իրականացվող «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» (այսուհետ՝ ԵԳԱԾ) Հայաստանի երիտասարդական հիմնադրամի միջոցով՝ հայտարարում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց (on-line) ռեժիմով (գրանցվելով https://grants.scs.am/ հասցեում)՝ մինչև **2015 թվականի նոյեմբերի 23-ը** ներառյալ (մինչև Երևանի ժամանակով ժամը 18:00):

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում (http://scs.am/):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչությունում՝ աշխատանքային օրերին, ժամը 14:00 - 17:00, հեռ.՝ 21-01-40 (118):

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

Հավելված N 2
ՀՀ ԿԳ նախարարի
2015թ. «20» հոկտեմբերի
N 891-Ա/Ք հրամանի

ՀՐԱՎԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 891-Ա/Ք հրամանի համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը և Հայաստանի Հանրապետության Նախագահի հովանու ներքո իրականացվող «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» (այսուհետ՝ ԵԳԱԾ) Հայաստանի երիտասարդական հիմնադրամի միջոցով՝ հայտարարում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի (այսուհետ՝ Հավելավճար) տրամադրման հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

1.2 Մրցույթի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրի «Բարձր արդյունավետությամբ աշխատողների հավելավճարներ» մասի և ԵԳԱԾԻ ֆինանսական միջոցներից:

1.3 Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով և մասնագիտություններով: Մրցույթի արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված առավել բարձր արդյունավետությամբ աշխատող 50

երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) 1 (մեկ) տարի ժամկետով համաֆինանսավորման սկզբունքով կտրամադրվի ամսական 75 000 ՀՀ դրամ՝ Հավելավճարի տեսքով: Մրցույթն իրականացնող կողմերից յուրաքանչյուրը կֆինանսավորի առավել բարձր արդյունավետությամբ աշխատող 25 երիտասարդ գիտաշխատողի:

1.4 Մրցույթի շրջանակներում կատարվող աշխատանքները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից, իսկ դրանց համակարգումն իրականցվում է՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 891-Ա/Ք հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից:

2. Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1 Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում 2015 թվականի հունիսի 1-ի դրությամբ ընդգրկված, առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության աշխատանքային ստաժ ունեցող՝ ներառյալ ասպիրանտուրայի ուսուցման տարիները և մինչև 35 տարեկան անձինք: 35 տարին չպետք է լրացած լինի Մրցույթի Հայտերի ընդունման վերջնաժամկետի օրը:

2.2 Մրցույթի մասնակիցը պետք է լինի Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ, ինչպես նաև Հավելավճար ստանալու ընթացքում առնվազն 6 ամիս բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

2.3 Մրցույթին չեն կարող մասնակցել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի N 1054-Ա/Ք հրամանի համաձայն անցկացված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարները:

3. Հայտերի լրացման և ներկայացման կարգը

3.1 Հայտերը լրացվում են սույն հրավերի Հավելված N 1-ում ներկայացված «Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության» (այսուհետ՝ Մեթոդաբանություն) կետերի և ենթակետերի պահանջներին համապատասխան՝ ըստ Հավելված N 2-ում նշված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների»:

3.2 Մրցույթի Հայտը լրացվում և ներկայացվում է Կոմիտե՝ Կոմիտեի Հայտերի և հաշվետվությունների առցանց ներկայացման համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ https://grants.scs.am/:

3.3 Հայտ ներկայացնելու համար Մրցույթի մասնակիցը գրանցվում է Համակարգում, եթե մինչ այդ գրանցված չի եղել: Գրանցված անձին նույնականացման համար շնորհվում է 12-նշանոց Անհատական կոդ և առաջարկվում է լրացնել «Անձնական տվյալներ» բաժինը: Համակարգում գրանցում ունեցող անձինք կարող են պարբերաբար վերանայել և լրամշակել Համակարգում արդեն ներմուծված տվյալները, ինչպես նաև մասնակցել այլ մրցույթներին:

Ուշադրություն. Ցանկացած անձ գրանցվում է Համակարգում միայն մեկ անգամ՝ ստանալով Համակարգում իր մշտական Անհատական կոդը և էջը:

3.4 Հայտը լրացնելու ընթացքում Համակարգն իրականացնում է որոշ ստուգումներ և, եթե մուտքագրվող բոլոր տեղեկությունները համապատասխանում են սույն հրավերի պահանջներին, ապա ակտիվանում է Հայտի առցանց ուղարկման հնարավորությունը:

3.5 Հայտը հաջողությամբ ուղարկելու դեպքում այն ստանում է «Ուղարկված է» կարգավիճակ, գրանցվում է Համակարգում, ստանում է ծածկագիր: Ուղարկված Հայտը այլևս ենթակա չէ փոփոխությունների և Հայտի առցանց լրացման բոլոր էլեկտրոնային ձևերն արգելափակվում են:

3.6 Հայտի էլեկտրոնային տարբերակը լրացվում և ներկայացվում է **2015 թվականի հոկտեմբերի 23-ից մինչև 2015 թվականի նոյեմբերի 23-ը** ներառյալ (մինչև՝ Երևանի ժամանակով ժամը 18:00): Հայտի ուղարկման հնարավորությունն ավտոմատ արգելափակվում է 18:00-ից հետո:

3.7 Ծածկագիր ստացած Հայտի պաշտոնական տարբերակից հայտատուն պարտավոր է ներբեռնել տիտղոսաթերթը և մեկ օրինակ տպագիր տարբերակով, դիմումը (սույն հրավերի Հավելված N 3), աշխատանքային գրքույկի (աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ), ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի պատճեններն անձամբ ներկայացնել Կոմիտե՝ Հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, հետևյալ հասցեով՝ քաղաք Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ (ժամը 10:00-13:00 և 14:00-17:00): Կոմիտե պետք է ներկայացնել նաև Մեթոդաբանության 1-ին կետի համապատասխան ենթակետերով (3)-րդ, 4)-րդ և 7)-րդ) պահանջվող փաստաթղթերի պատճենները: Տիտղոսաթերթը պետք է ստորագրված լինի գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) կամ փոխտնօրենի (պրոռեկտորի) կողմից և հաստատված՝ գիտական կազմակերպության (բուհի) կնիքով:

Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել ըստ վերը նշված կարգի և մինչև վերը նշված ժամկետը, ծածկագիր չեն ստանում և ենթակա չեն հետագա քննարկմանը:

4. Հայտերի ընտրությունը և վարկանիշային ցանկի ձևավորումը

4.1 Հայտերի ընտրությունն իրականացվելու է ըստ Մեթոդաբանության հիման վրա ձևավորված գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի (այսուհետ՝ ԳԳԱՑ) վարկանիշային տվյալների: Մրցույթի շրջանակներում գիտաշխատողների ԳԳԱՑ-ը որոշելու ընթացքում հիմք են հանդիսանալու՝

4.1.1 2010-2015 թվականներին հրապարակված գիտական հոդվածները (առնվազն 2 էջ, Մեթոդաբանության 1)-ին ենթակետը),

4.1.2 2010-2015 թվականներին հրապարակված մենագրությունները, կոլեկտիվ մենագրությունները, գիտամեթոդական ձեռնարկները, նյութերի կամ հոդվածների ժողովածուները (առնվազն 2 էջ, Մեթոդաբանության 2)-րդ ենթակետը),

4.1.3 2013-2015 թվականներին տեղի ունեցած գիտաժողովների մասնակցությունը (Մեթոդաբանության 3)-րդ ենթակետը),

4.1.4 2010-2015 թվականներին ստացած արտոնագրերը (Մեթոդաբանության 4)-րդ ենթակետը),

4.1.5 2010-2015 թվականներին պաշտպանած թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը (Մեթոդաբանության 5)-րդ ենթակետը),

4.1.6 2010-2015 թվականներին ստացած գիտական մրցանակները (Մեթոդաբանության 6)-րդ ենթակետը),

4.1.7 գիտական աստիճանները (Մեթոդաբանության 7)-րդ ենթակետը),

4.1.8 Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպության կամ բուհի հրապարակման պատկանելիության (affiliation) կամ մշտական աշխատանքի վայրի (permanent address) մեջ նշված հրապարակումները,

4.1.9 գիտական հրապարակումների հղումները (առանց ինքնահղումների), որոնք առկա են «Թոմսոն Ռոյթերս»-ի (WOS) գիտատեղեկատվական շտեմարանում: Ինքնահղումներն որոշվում են հեղինակի (բոլոր համահեղինակների) կողմից տվյալ աշխատանքի վրա եղած հղումներով:

4.2 Կոմիտե ներկայացված Հայտերը 10 աշխատանքային օրերի ընթացքում անցնում են տեխնիկական ստուգում՝ Հայտերում լրացված տեղեկատվության հավաստիությունը ճշգրտելու նպատակով:

4.3 Տեխնիկական ստուգմամբ սույն հրավերի պահանջներին համապատասխանող Հայտերը Կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից 3 աշխատանքային օրերի ընթացքում տրամադրվում են Խորհրդի քննարկմանը:

4.4 Վարկանիշային ցանկի ձևավորման ընթացքում՝

4.4.1 հայտատուների ԳԳԱՑ-ների հավասարության դեպքում դրանք դասավորվում են ըստ Մեթոդաբանության 1)-ից 7)-րդ ենթակետերի առաջնահերթությունների, իսկ վերջիններիս հավասարության դեպքում՝ պատահականության սկզբունքով,

4.4.2 հայտատուի գիտական և գիտատեխնիկական գործունեությանը համապատասխանող մեկից ավելի հնարավոր մասնագիտական դասիչների առկայության դեպքում՝ ընտրված (նշված) մասնագիտական դասիչը պետք է համապատասխանի հրապարակումների մեծամասնության ոլորտին (subject): Նոր մասնագիտական դասիչի ընտրության հիմնավորվածության վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել այդ մասնագիտության գծով գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի եզրակացությունը,

4.4.3 հայտատուի գիտական համագործակցության անդամ լինելու դեպքում՝ հրապարակումների մեծամասնությունը պետք է հրատարակված լինի այդ համագործակցության շրջանակներում: Գիտական համագործակցության շրջանակներում կատարված աշխատանք է համարվում այն աշխատանքը, որի համահեղինակների թվաքանակն առնվազն քսան է,

4.4.4 հայտատուի մեկից ավելի գիտական համագործակցությունների անդամ լինելու դեպքում, որպես հիմք ընդունվում է տվյալ պահին գործող համագործակցությունը կամ, եթե համագործակցության աշխատանքներն ավարտվել են, ապա գիտական հրապարակումների մեծամասնությունն ընդգրկող համագործակցությունը,

4.4.5 յուրաքանչյուր գիտական համագործակցությանը հատկացվում է ընդհանուր տեղերի մինչև երկու տոկոսը՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության շեմային գնահատականը հաղթահարելու պայմանով: Համագործակցություններին հատկացվող տեղերի գումարային քանակը չի կարող գերազանցել ընդհանուր տեղերի քանակի 1/3-ը:

4.5 Խորհուրդը, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների ֆինանսավորման համար հատկացումների չափից և արդյունքների նկարագրության գիտաչափական տվյալներից՝ 5 օրացուցային օրերի ընթացքում որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի կամ մասնագիտության շեմային գնահատականը, որին հավասար կամ բարձր ցուցանիշ ունեցող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) տրամադրվում է Հավելավճար: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը հաստատում է Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների ցուցակը և հատկացման չափը՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների:

4.6 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառների և մասնագիտությունների համար սահմանվում է Մրցույթի բացարձակ շեմային գնահատական՝ ԳԳԱՑ-ի 1-ին կետի 1)-ին, 2)-րդ և 3)-րդ ենթակետերով որոշվող գնահատականների գումարի հարաբերությունն ընդհանուր՝ 1)-ին-7)-րդ ենթակետերի գնահատականների գումարին պետք է լինի առնվազն 0.5:

4.7 Կոմիտեն 5 աշխատանքային օրերի ընթացքում գիտական կազմակերպություններին (բուհերին) տրամադրում է տվյալ գիտական կազմակերպությունում (բուհում) աշխատող և Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների ցուցակը:

4.8 Կոմիտեի նախագահի և գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարներին Հավելվածարի տրամադրման նպատակով:

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշն (այսուհետ՝ ԳԳԱՑ) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) Գրախոսվող գիտական ամսագրերում ունեցած հրապարակումների (այսուհետ՝ հոդված): *Գիտական ամսագիր՝ Web of Knowledge, Scopus, Springer, Astrophysics, PubMed, Mathematics, Chemical Abstracts, Agris, GeoRef միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (այսուհետ՝ ՄԳՇ), ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՀ-ի ցանկում ընդգրկված ամսագիր, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագիր: Հոդված՝ գիտական ամսագրում հրատարակված հոդված (Article) կամ քննադատական ակնարկ (Review): Հաշվի է առնվում տարեկան առավելագույնը 12 ընդհանուր գիտական հրապարակում: Ընդհանուր գիտական հրապարակումը՝ սույն մեթոդաբանության 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով որոշվող հրապարակումների քանակների գումարն է:*

Յուրաքանչյուր հոդվածի համար՝

IF - ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակից (ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

A = 1,00 - հոդված՝ 0,20 և բարձր ԱԳ ունեցող ամսագրում,

A = 0,20 - հոդված՝ 0,20-ից ցածր ԱԳ, ինչպես նաև ԱԳ չունեցող, բայց ՄԳՇ, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՀ-ի ցանկում ընդգրկված ամսագրում,

A = 0,15 – հոդված՝ արտերկրում հրատարակված և ՄԳՇ, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՀ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում,

A = 0,10 – հոդված՝ ՀՀ-ում հրատարակված և ՄԳՇ, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՀ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող և մատենագրվող ամսագրում,

W - համահեղինակների քանակով որոշվող գործակից՝

Համահեղինակների թիվը	1-4	5-9	10-19	20-49	50-99	100-199	200-499	500-999	1000-1999	2000+
W	1	0,75	0,56	0,42	0,32	0,24	0,18	0,13	0,10	0,08

C - հղումների քանակով (առանց ինքնահղումների) որոշվող գործակից՝

Հղումների թիվը	0-1	2-4	5-9	10-19	20-49	50-99	100-199	200-499	500-999	1000+
C	1	1,025	1,05	1,1	1,15	1,5	2	2,5	5	10

$E_1 = \sum A \times IF \times W \times C$, եթե ԱԳ (IF) ≥ 0,20, $E_1 = \sum A \times W \times C$, մնացած դեպքերում:

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտամեթոդական ձեռնարկների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրապարակումների: *Մենագրություն, կոլեկտիվ մենագրություն, գիտամեթոդական ձեռնարկ, նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված և ISBN ունեցող հրապարակում:*

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, գիտամեթոդական ձեռնարկի կամ նյութերի ժողովածուի համար՝
B = 0,25 - օտար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,
B = 0,20 - հայերեն լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,
B = 0,15 - գիտամեթոդական ձեռնարկ կամ օտար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,
B = 0,10 - հայերեն լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,
PSh - ծավալ (տպագրական մամուլ, 16 էջ),
Nь - համահեղինակների քանակ:

$E_2 = \sum B \times PSh / N_b$, 10-ից ավել համահեղինակների դեպքում՝ $N_b = 10$:

Հոդվածների ժողովածուի յուրաքանչյուր հոդվածի համար՝
BA = 0,20 – օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,
BA = 0,10 – հայերեն լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,
W - համահեղինակների քանակով որոշվող գործակից,
C - հղումների քանակով (առանց ինքնահղումների) որոշվող գործակից:

$E_2 = \sum BA \times W \times C$:

3) Գիտաժողովների մասնակցության: *Հաշվի է առնվում համապատասխան ինտերնետային կայքէջի կամ փաստաթղթային հաստատման առկայության դեպքում՝ առավելագույնը տարեկան 12 մասնակցություն: Գիտաժողովների թեզիսները (Abstract) և նյութերում չընդգրկված ստենդային զեկույցները (Poster) չեն գնահատվում:*

Յուրաքանչյուր զեկույցի կամ գիտաժողովի նյութերում (Proceeding) հրապարակման համար՝

Հրավիրված զեկույց՝
T = 1,00 - արտերկրում տեղի ունեցած գիտաժողով,
T = 0,75 - ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողով:
Բանավոր զեկույց՝
T = 0,25 - արտերկրում տեղի ունեցած գիտաժողով,
T = 0,20 - ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողով,
W - համահեղինակների քանակով որոշվող գործակից,
C - հղումների քանակով (առանց ինքնահղումների) որոշվող գործակից:

$E_3 = \sum T \times W \times C$:

Գիտաժողովի նյութերում հրապարակում՝
P = 0,15 – արտերկրում տեղի ունեցած գիտաժողով,
P = 0,10 – ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողով,
W - համահեղինակների քանակով որոշվող գործակից,

C - հղումների քանակով (առանց ինքնահղումների) որոշվող գործակից:

$E_3 = \sum P \times W \times C$:

4) **Արտոնագրերի:** *Հաշվի է առնվում համապատասխան ինտերնետային կայքէջի կամ փաստաթղթային հաստատման առկայության դեպքում:*

Յուրաքանչյուր արտոնագրի համար՝
Pt = 1,00 - արտերկրում գրանցված,
Pt = 0,10 - ՀՀ-ում գրանցված,
N_{pt} - համահեղինակների քանակ,

$E_4 = \sum Pt / N_{pt}$, 10-ից ավել համահեղինակների դեպքում՝ $N_{pt} = 10$:

5) **Թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման:** *Հաշվի է առնվում տարեկան 1 թեկնածուական թեզի պաշտպանություն:*

Ղեկավարությամբ պաշտպանված յուրաքանչյուր ատենախոսության համար՝
PhD = 1,00 - ղեկավար,
PhD = 0,50 – համաղեկավար:

$E_5 = \sum PhD$:

6) **Մրցանակների:** *Մրցանակ՝ ճանաչված միջազգային գիտական մրցանակ, ՀՀ Նախագահի, ՀՀ կամ օտարերկրյա պետության պետական մրցանակ: Հաշվի է առնվում համապատասխան ինտերնետային կայքէջի կամ փաստաթղթային հաստատման առկայության դեպքում:*

Յուրաքանչյուր մրցանակի համար՝
Pr = 10,00 - ճանաչված միջազգային գիտական մրցանակ,
Pr = 5,00 - ՀՀ Նախագահի, ՀՀ կամ օտարերկրյա պետության պետական մրցանակ,
N_{pr} – մրցանակակիրների քանակ:

$E_6 = \sum \mathrm{Pr} / N_{pr}$, 10-ից ավել համահեղինակների դեպքում՝ $N_{pr} = 10$:

7) **Գիտական աստիճանի:**
AD = 2,50 - գիտությունների դոկտոր,
AD = 2,00 - գիտությունների թեկնածու,
AD = 0 - չունի գիտական աստիճան:

$E_7 = AD$:

2. ԳԳԱՑ-ը սույն մեթոդաբանության 1-ին կետի 1)-7)-րդ ենթակետերի գումարն է՝

$$E = \sum_{i=1}^{7} E_i \ :$$

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա
1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
1.3. Ֆիզիկա և աստղագիտություն
1.4. Քիմիա
1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
1.6. Կենսաբանական գիտություններ
1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն
2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
2.3. Մեխանիկա
2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն
2.5. Քիմիական տեխնոլոգիաներ
2.6. Նյութագիտություն
2.7. Բժշկական սարքաշինություն
2.8. Էկոլոգիա
2.9. Կենսատեխնոլոգիա
2.10. Նանոտեխնոլոգիա
2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն
3.2. Կլինիկական բժշկություն
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա
3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն
4.2. Բուսաբուծություն
4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն
5.2. Տնտեսագիտություն և գործարարություն
5.3. Մանկավարժական գիտություններ
5.4. Սոցիոլոգիա
5.5. Իրավունք
5.6. Քաղաքական գիտություններ
5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
5.9. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն
6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն
6.3. Փիլիսոփայություն, էթիկա
6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն
6.5. Արվեստագիտություն
6.6. Այլ հումանիտար գիտություններ

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթին ----- ծածկագրով առցանց ներկայացված Հայտի պահանջվող փաստաթղթերը՝

- աշխատանքային գրքույկի (աշխատանքային ստաժը հաստատող փաստատուղթ) պատճեն,
- անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
- տիտղոսաթերթ,
- ինտերնետային հղում չունեցող, մասնակցած գիտաժողովների ծրագրերի պատճենները,
- ինտերնետային հղում չունեցող արտոնագրերի պատճենները,
- ինտերնետային հղում չունեցող մրցանակների ստացումը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2015թ.

Հավելված N 3
ՀՀ ԿԳ նախարարի
2015թ. «20» հոկտեմբերի
N 891-Ա/Ք հրամանի

ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ

Ազգանուն անուն հայրանուն	**Գիտական աստիճան**	**Պաշտոն**
1. Աշոտյան Արմեն Գևորգի	բժշկական գիտությունների թեկնածու	ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)
2. Հարությունյան Սամվել Գառնիկի	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ
3. Սահակյան Վարդան Հայաստանի	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալ
4. Էդոյան Արա Հենրիկի	_____	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
5. Ղազարյան Էդուարդ Մուշեղի	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր	Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն
6. Գրիգորյան Արեգ Խաչիկի	տեխնիկական գիտությունների դոկտոր	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի գիտության և գիտատեխնոլոգիական համագործակցության գծով պրոռեկտոր
7. Աղաջանով Միքայել Իոսիֆի	կենսաբանական գիտությունների դոկտոր	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կենսաքիմիայի ամբիոնի վարիչ
8. Ղազարյան Հունան Ղազարի	գյուղատնտեսական գիտությունների դոկտոր	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Հ. Պետրոսյանի անվան

		հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի» գիտական կենտրոն մասնաճյուղի տնօրեն
9. Աղուզումցյան Ռուբեն Վազգենի	հոգեբանական գիտությունների թեկնածու	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ
10. Սարգսյան Լևոն Ազատի	պատմական գիտությունների դոկտոր	Երևանի պետական համալսարանի հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի վարիչ
11. Եպիսկոպոսյան Լևոն Միխայելի	կենսաբանական գիտությունների դոկտոր	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ
12. Զաքարյան Հովակիմ Սարգսի	կենսաբանական գիտությունների թեկնածու	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի բջջի կենսաբանության և վիրուսաբանության լաբորատորիայի գիտաշխատող
13. Մովսիսյան Արտուր Եղիշի	_____	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի ճառագայթների և տարրական մասնիկների փոխազդեցությունը նյութերի հետ լաբորատորիայի առաջատար գիտաշխատող